ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 74 << 22.12 >> 2015թ.

Հ Հ Լոռու մարզպետ

Պարոն Ա.Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Պրիվոլնոյե համայնքի ավագանու թիվ 33-Ն, 34-Ն, 35, 36 որոշումները:

Համայնքի ղեկավարի թիվ 85 որոշումը:

Առդիր 9

Համայնքի ղեկավար Վ.Սարուխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

09 դեկտեմբեր 2015 թ. N 33 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ **2016** ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

Պրիվոլնոյեի գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյեի գյուղական համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Առաքելյան Ալբերտ | | | |
| Բաբսեղյան Արթուր | | | |
| Մամուլյան Անդրանիկ | | | |
| Ռնազյան Էդուարդ | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ Վ.Մարուխանյան /

2015թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 09
գ. Պրիվոլնոյե

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գյուղական համայնքի ավագանու
2015 թ.դեկտեմբերի 09 -ի թիվ 33 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ 7000 դրամ.(յոթ հազար)

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.(տասնհինգ հազար)

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.(քսանհինգ հազար)

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ. (քսանհինգ հազար)

3001-ից և ավելիւ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ.(հիսուն հազար)

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

1500 դրամ. (մեկ հազար հինգհարյուր)

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

2500 դրամ. (երկու հազար հինգհարյուր)

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ. (մեկ հազար հինգհարյուր)

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

2500 դրամ. (երկու հազար հինգհարյուր)

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ. (երեք հազար)

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ. (երեք հազար)

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար ՝ 300 դրամ՝(երեք հարյուր) մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ -դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝-դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ. (մեկ հազար)

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 500 դրամ. (հինգ հարյուր)

5)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ - դրամ.

6)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ -դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 2500դրամ.(քսանհինգ հազար)

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000դրամ.(հիսուն հազար)

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000դրամ.(երկու հարյուր հազար)

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000դրամ.(հինգ հարյուր հազար)

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ.(երկու հարյուր հիսուն հազար)

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000դրամ:(մեկ հարյուր հազար )

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000դրամ.(մեկ հազար )

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500դրամ.(երկու հազար հինգ հարյուր)

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500դրամ.(հինգ հարյուր)

4) դատարկ գովազդային վահանակների համար` յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել` 1000դրամ:(մեկ հազար)

Հայաստանի Հանրապետության հմայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել` 5000 դրամ (հինգ հազար)

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել` 1000 դրամ (մեկ հազար)

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել` 1000 դրամ(մեկ հազար)

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել` 1000դրամ (մեկ հազար)

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել` 1000դրամ(մեկ հազար)

Համայնքի ղեկավար` Վ.Սարուխանյան

09 դեկտեմբեր 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզի
Պրիվոլնոյեի համայնք,հացե, ,էլ.փոստ privolnoye.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» 12 2015թ թվականի N 34-Ն

Համայնքի 2015 թվականի թիվ 02-Ն որոշման մեջ փոփոխության կատարելու մասին:

Ղեկավարվելով «Տ.Ի.Մ.» Հ.Հ. օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հ.Հ. բյուջետային համակարգի մասին» Հ.Հ. օրենքի 33-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հ.Հ. օրենքի 70-րդ հոդվածով՝

Պրիվոլնոյե համայնքի ավագանին որոշում է՝

1. Պրիվոլնոյե համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 19-ի «Պրիվոլնոյե համայնքի 2015թ-ի բյուջեն հաստատելու մասին» թիվ 02-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանի կողմ դեմ ձեռնպահ

1. Ղազարյան Ալբերտ
2. Բարսեղյան Արթուր
3. Մանուկյան Ռոզիթանեկ
4. Ոսկյան Էդուարդ

Համայնքի ղեկավար Ա. Սարաֆյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզի
Պրիվոլնոյեի համայնք,հացե, ,էլ.փոստ privolnoye.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<18>>> 12 2015թ թվականի N35

Պրիվոլնոյե համայնքի կարիքավոր ընտանիքներին սոց. օգնության տալու մասին:

Պրիվոլնոյե համայնքի ավագանին որոշեց: համայնքի բյուջեից հատկացված 4929 սոց. ծախսերից հատկացնել 70,000 դրամ և թույլատրել վճարելու սոց. օգնություն համայնքի կարիքավոր ընտանիքներին.

1. Կալինինա Վալենտինա Վ - 50,000 դրամ
2. Բարանովսկայա Ալեքսանդրա - 10,000 " "
3. Օվչիննիկով Նիկոլայ - 10.000 " "

ընդամենը 70,000 դրամ

Ավագանու կողմ քվեարկեցին.

1. Կազաբեկյան Սերգեյ
2. Բարանովսկի Պյոտր
3. Կաբանցյան Ալեքսանդր
4. Շևչուկ Նիկոլայ

Համայնքի ղեկավար Օ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզի
Պրիվոլնոյեի համայնք,հացե, ,էլ.փոստ privolnoye.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>>> 12 2015թ թվականի N36

Համայնքի կողմից ընտանիքների անդամներին սոց. օգնություն տալու մասին:

Պրիվոլնոյեի համայնքի ավագանին որոշում է՝ համայնքի բյուջեի հոդված 4729 սոց. ծախսերից հատկացնել 20.000 դրամ և բաշխարել կարիքավոր սոց. օգնության համայնքի կողմից [illegible] ընտանիքների անդամներին:

1. Հարությունյան Ալվերդի - 10.000 դրամ
2. Օհանովա Մարինա - 10.000 -"-

Ընդամենը 20.000 դրամ

Ավագանի կողմ [illegible]

1. Ալեքսանյան Ալբերտ
2. Բարսեղյան Արթուր
3. Ասատրյան Անդրանիկ
4. Դեմչյան Նունուֆար

Համայնքի ղեկավար Ս. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԻՎՈԼՆՈՅԵ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Պրիվոլնոյե համայնք, գ. Պրիվոլնոյե
հեռ.077 90-20-21 էլ.փոստ.privolnoye.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> 12 2015 թվականի N85

Պրիվոլնոյե համայնքի ղեկավարի թիվ 84 որոշումը անվավեր ճանաչելու մասին:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հ.Հ. օրենքի 74-րդ հոդվածով՝ համայնքի ղեկավարի թիվ 85 որոշումը ճանաչել անվավեր:

Համայնքի ղեկավար [signature] Վ. Հարությունյան